Հավելված 1
ՀՀ առողջապահության նախարարի
13. սեպտեմբեր 2019 թթ. N 2525 - Լ հրամանի

Մանկաբուժական հիվանդանոցային ծառայությունների հիմնական բնութագրիչները՝ ըստ բուժօգնության մակարդակների

Մակարդակ	**Կառուցվածք և գործառույթներ**	**Մանկաբուժական օգնություն**	**Վիրաբուժական օգնություն**
I **մակարդակի** մանկական հիվանդանոցային բուժօգնություն/ծառայություն	Ցուցաբերվում է բժշկական կենտրոնների/հիվանդանոցների կազմում գործող մեծահասակ/մանկական խառը բաժանմունքներում և չկա մանկաբույժի շուրջօրյա հերթապահություն: Ըստ անհրաժեշտության իրականացվում է հիվանդ երեխայի տեղափոխում ավելի բարձր մակարդակի մանկաբուժական կամ մանկական նեղ մասնագիտական ծառայություն ունեցող բժշկական կազմակերպություն: Պարտադիր է՝ ինտենսիվ թերապիայի պալատի առկայությունը՝ համապատասխան հագեցվածությամբ և մանկաբույժի ցերեկային աշխատանքը:	1. Հիվանդ երեխայի վիճակի գնահատում, ըստ անհրաժեշտության շտապ և անհետաձգելի բուժօգնության ցուցաբերում; 2. Թեթև/միջին ծանրությամբ և թեթև աստիճանի բարդություններով սուր ախտաբանություններով հիվանդ մինչև 18տ. երեխաների բուժում՝	Ցածր բարդության վիրաբուժական միջամտություններ 7 և ավելի բարձր տարիքի երեխաների համար, ինչպես նաև կյանքի ցուցումով անհետաձգելի վիրաբուժական օգնության ցուցաբերում այն դեպքերում, երբ տեղափոխման ռիսկը գերազանցում է տեղում միջամտության իրականացմանը:
II **Ա մակարդակի**	Ցուցաբերվում է բժշկական	1. Հիվանդ երեխայի	Ցածր աստիճանի

մանկական հիվանդանոցային բուժօգնություն/ծառայություն	կենտրոնների/հիվանդանոցների մանկաբուժական առանձին բաժանմունքներում,,իսկ ընդհանուր վիրաբուժական և վերակենդանացման բաժանմունքներում կան մանկական մահճակալներ՝ երեխաների համար համապատասխան սարքավորումների առկայությամբ: Պարտադիր է. 1. մանկաբույժի շուրջօրյա հերթապահությունը, 2. առնվազն մեկ մանկական ընդհանուր վիրաբույժի ցերեկային աշխատանքը, 3. առնվազն մեկ մանկական ռեանիմատոլոգի առկայությունը:	վիճակի գնահատում, ըստ անհրաժեշտության շտապ և անհետաձգելի բուժօգնության ցուցաբերում; 2. Թեթև/միջին ծանրությամբ և միջին աստիճանի բարդություններով ընդհանուր մանկաբուժական պրոֆիլի հիվանդություններով տառապող, մանկական նեղ մասնագիտացված բուժօգնության կարիք չունեցող երեխաների բուժում; 3. Ըստ անհրաժեշտության ծանր հիվանդ երեխաների տեղափոխում ավելի բարձր մակարդակի մանկաբուժական կամ համապատասխան մանկական նեղ	բարդության միջամտություններ՝ մինչև 18 տարեկան երեխաների և միջին բարդության միջամտություններ՝ 7-18 տարեկան երեխաների համար, ինչպես նաև անհետաձգելի միջամտությունների/վիրահատությունների իրականացում, եթե տեղափոխման ռիսկը գերազանցում է տեղում միջամտության իրականացմանը

		մասնագիտացված ծառայություն ունեցող բժշկական կազմակերպություն:	
II **Բ մակարդակի** մանկական հիվանդանոցային բուժօգնություն/ծառայություն	Ցուցաբերվում է այն բժշկական կենտրոնների/հիվանդանոցների կողմից, որտեղ առկա են առանձին մանկաբուժական, մանկական վիրաբուժական և մանկական վերակենդանացման բաժանմունքներ, ինչպես նաև առանձին մանկական նեղ մասնագիտացված ծառայություններ՝ համապատասխան հագեցվածությամբ: Ըստ անհրաժեշտության ծանր աստիճանի բարդություններով հիվանդ երեխաների տեղափոխում ավելի բարձր մակարդակի մանկաբուժական /վիրաբուժական կամ համապատասխան մանկական նեղ մասնագիտացված ծառայություն ունեցող բժշկական կազմակերպություն; Պարտադիր է. 1. մանկաբույժի, մանկական վիրաբույժի և մանկական ռեանիմատոլոգի շուրջօրյա հերթապահությունը, 2.առնվազն 1 մանկական նեղ մասնագետի	1. Հիվանդ երեխայի վիճակի գնահատում, ըստ անհրաժեշտության շտապ և անհետաձգելի բուժօգնության ցուցաբերում; 2. Հիվանդության միջին ու ծանր ընթացքով և միջին/ծանր աստիճանի բարդություններով ընդհանուր մանկաբուժական, ինչպես նաև միջին աստիճանի բարդության մանկական առանձին նեղ մասնագիտացված ծառայությունների (բժշկական կազմակերպության կառուցվածքին համապատասխան) կարիք	Մինչև 18 տարեկան երեխաների ցածր և միջին աստիճանի բարդության վիրաբուժական միջամտություններ, ինչպես նաև անհետաձգելի միջամտությունների/վիրահատությունների իրականացում, եթե տեղափոխման ռիսկը գերազանցում է տեղում միջամտության իրականացմանը:

	առկայություն՝ բժշկական կազմակերպության կառուցվածքում ամրագրված մանկական նեղ մասնագիտացված ծառայություններին համապատասխան:	ունեցող երեխաների բուժում;	
III **մակարդակի** մանկական հիվանդանոցային բուժօգնություն/ծառայություն	Ցուցաբերվում է բազմաֆունկցիոնալ, մասնագիտացված և նեղ մասնագիտացված մանկաբուժական և մանկական վիրաբուժական բաժանմունքներ, մանկական վերակենդանացման ստորաբաժանում ունեցող բժշկական կազմակերպությունների կողմից, որոնք ունեն նաև որոշակի գործառույթներ ողջ հանրապետության կտրվածքով (արտագնա անհետաձգելի բուժօգնության իրականացում, խրոնիկ հիվանդ երեխաների դիսպանսեր հսկողության իրականացում, ընդհանուր մանկաբուժական, մանկական վիրաբուժական և մանկական նեղ մասնագիտական ծառայությունների գծով արտահիվանդանոցային խորհրդատվությունների իրականացում): Պարտադիր է. 1. մանկաբույժի, մանկական վիրաբույժի, մանկական ռեանիմատոլոգի և այլ մանկական նեղ մասնագետների (ըստ բժշկական կազմակերպության հիմնական	1. հիվանդ երեխայի վիճակի գնահատում, հիվանդների տեսակավորում և ըստ անհրաժեշտության բուժօգնության ցուցաբերում կարճատև բուժօգնության անհետաձգելի ծառայությունների կազմակերպման (Emergency) մանկական ստորաբաժանումներում: 2. մանկաբուժական, վիրաբուժական, մանկական նեղ մասնագիտական պրոֆիլի (ըստ բուժհաստատության կառուցվածքի), ծանրության տարբեր ընթացքով և ցածրից մինչև բարձր աստիճանի բարդությամբ հիվանդություններ/խնդիրներ ունեցող երեխաների բժշկական օգնություն և սպասարկում:	

	ստորաբաժանումների) շուրջօրյա հերթապահությունը, 2. մանկական նեղ մասնագետների առկայությունը աշխատանքային ժամերին և/կամ հասանելիության ապահովումը 7/24 ռեժիմով՝ բժշկական կազմակերպության կառուցվածքում ամրագրված մանկական նեղ մասնագիտացված 12 ծառայություններին համապատասխան: 3. շուրջօրյա (7/24 աշխատանքային ռեժիմով) լաբորատոր գործիքային, ներառյալ բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ հետազոտությունների ապահովում 4. ստացիոնարին կից արտահիվանդանոցային մանկաբուժական և մանկական նեղ մասնագիտական ծառայություններ տրամադրող մասնագետների առկայություն՝ տվյալ կազմակերպության գործառույթների շրջանակներում:	

Հավելված 2
ՀՀ առողջապահության նախարարի
13. սեպտեմբեր 2019թ. N 2525 – Լ հրամանի

ՄԱՆԿԱԲՈՒԺԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ, ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱՆՐՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ	
Թեթև	Վիճակը չի պահանջում անհետաձգելի բուժօգնություն Բժշկի գնահատմամբ՝ չկա վիճակի վատթարացման անմիջական վտանգ Ինտենսիվ բուժման անհրաժեշտությունը բացակայում է
Միջին	Խնդիրը կարող է հանգեցնել վիճակի, որը կպահանջի ավելի ընդարձակ միջամտություն Հիվանդությունը կարող է զուգորդվել ֆունկցիոնալ անկարողության և ինքնազգացողության զգալի վատացման հետ Ինտենսիվ բուժման կարիքի անհրաժեշտությունը հազվադեպ է
Ծանր	Վիճակը իրենից ներկայացնում է կյանքի, առողջության և գործունեության համար պոտենցիալ կամ իրական սպառնալիք, կարող է պահանջել անհետաձգելի կամ պոտենցիալ ագրեսիվ միջամտություն Որպես կանոն, պահանջում է հիվանդանոցային բուժօգնություն՝ ինտենսիվ և անհետաձգելի բուժօգնության տրամադրումով

ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ	
Թեթև բարդություն	Երեխայի վիճակը կարող է կառավարվել ստանդարտ լաբորատոր և ախտորոշիչ հետազոտությունների և բուժման արձանագրությունների միջոցով, Համեմատաբար հաճախ հանդիպող վիճակ է, եթե ոչ, վարման պլանը նախապես հայտնի է, Հիվանդության ազդեցությունը չի բերում ֆունկցինալ արտահայտված սահմանափակումների,

	Խրոնիկ հիվանդության դեպքում առկա է կայուն վիճակ
Միջին բարդություն	Վիճակը կարող է կառավարվել ստանդարտ լաբորատոր և ախտորոշիչ հետազոտությունների և բուժման արձանագրությունների միջոցով, Համեմատաբար հաճախ հանդիպող վիճակ է, կամ հիվանդության վարման պլանը նախապես հայտնի է, Հաճախ ուղեկցվում է թեթև սրացումենրով, հարաճման նշաններով, ուղեկցվում է բուժման կողմնակի ազդեցությամբ Առկա է ախտորոշված քրոնիկ հիվանդություն՝ ոչ հաճախակի սրացումներով , Հիվանդությունը բերում է արտահայտված ֆունկցիոնալ սահմանափակումների:
Ծանր աստիճանի բարդություն	Քրոնիկ վիճակը ուղեկցվում է հաճախակի և էական սրացումներով, բուժման կողմնակի ազդեցությամբ և ունի հարաճուն ընթացք, Հիվանդության ազդեցությունը խիստ արտահայտված է, ազդելով տարբեր օրգան-համակարգերի գործունեության վրա, Հիվանդության կարող է կյանքի համար սպառնալիք հանդիսանա, Առկա է ֆունկցիոնալ խիստ սահմանափակում, որը հաճախ հանգեցնում է կախվածության որոշակի տեխնոլոգիաներից, Վիճակը պահանջում է միջամտությունների ընդլայնված և ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ շրջանակ, Երեխաների մոտ հազվադեպ հանդիպող վիճակներ, որոնք, անկախ բարդությունից, կարող են պահանջել նեղ մասնագետների խորհրդատվություն՝ ախտորոշման, շարունակական վարման և բուժման պլանը կազմելու համար:

ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ	
Թեթև աստիճանի բարդություն	Միջամտության/վիրահատության տևողությունը 2 ժամից պակաս է, Վիրահատարանում առօրյա օգտագործվող սարքավորումներ, Հետվիրահատական խնամքը պահանջում է ընդհանուր

	մանկաբուժական գիտելիքներ և հմտություններ ունեցող բուժանձնակազմ, չի ենթադրում մանկական/ նորածնային վերակենդանացման բաժանմունքում հետվիրահատական խնամք, Միջամտության/վիրահատության ժամանակ չի պահանջում արյան փոխարինիչների ներարկում, Վիրահատության ժամանակ և հետվիրահատական բարդությունների ռիսկը ցածր է:
Միջին աստիճանի բարդություն	Երեխաների շրջանում համեմատաբար հաճախ իրականացվող միջամտությունը /վիրահատություն Վիրահատության ժամանակ արյան փոխարինիչների ներարկման ռիսկը աննշան չէ, Ինտրա- և հետ վիրահատական բարդությունների ռիսկը աննշան չէ, Հետվիրահատական խնամքը պահանջում է հիմնականում երեխաների բուժման հմտություններ ունեցող բուժանձնակազմ , կամ միջդիսցիպլինար թիմ, Հետվիրահատական բուժում/խնամք մանկական վերակենդանացման բաժանմունքում չի պահանջվում, Չի պահանջվում մինչ- և հետվիրահատական բազմամասնագիտական կոորդինացիա:
Ծանր աստիճանի բարդություն	Միջամտությունը/ վիրահատությունը յուրահատուկ է երեխաների համար, իրականացվում է ոչ հաճախ, Հետվիրահատական բուժօգնությունը պահանջում է վիրաբուժական նեղ մասնագիտացված գիտելիքներով բուժանձնակազմ կամ բազմամասնագիտական թիմ, որոնք բացառապես կամ գերազանցապես աշխատաում են երեխաների հետ, Պահանջում է շուրջվիրահատական բազմամասնագիտական մասնակցություն (օրինակ, ընդհանուր և ՔԿԱ վիրաբույժ), պահանջվում է մինչ- և հետվիրահատական բազմամասնագիտական համակարգում:

Հավելված 3
ՀՀ առողջապահության նախարարի
13. սեպտեմբեր 2019թ. N 2525 - Լ հրամանի

Երեխաների բժշկական օգնություն և սպասարկում տրամադրող հիվանդանոցային բժշկական կազմակերպությունների գնահատման չափանիշները՝ ըստ մակարդակների

	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇ	I	II Ա	II Բ	III
Կառուցվածք					
1.	Մանկաբուժական մահճակալների թիվ	առնվազն 5	առնվազն 15	առնվազն 60 մահճակալ	Առնվազն 150
2.	Մանկաբուժական մահճակալներ ընդհանուր բաժանմունքում	Այո[1]	Ոչ[2]	Ոչ	Ոչ
3.	Մանկական (ներառյալ մանկաբուժական և վիրաբուժական ուղղվածության) բաժանմունքներ կամ ծառայություններ	առնվազն 1 ծառայություն	առնվազն 1 բաժանմունք /2 ծառայություն	առնվազն 3 բաժանմունք/ 5 ծառայություն	առնվազն 8 բաժանմունք/10 ծառայություն
4.	Ընդհանուր (մանկական և մեծահասակների)	Ոչ	Այո	Ոչ	Ոչ

[1] Պարտադիր է
[2] Պարտադիր չէ

	վերակենդանացման բաժանմունք	Առկա է ինտեսիվ թերապիայի պալատ			
5.	Վերակենդանացման և ինտենսիվ թերապիայի մանկական բաժանմունք շուրջօրյա հերթապահությամբ, համապատասխան մահճակալներով	Ոչ	Ոչ	Այո Առնվազն 6 մահճակալ	Այո Առնվազն 18 մահճակալ
6.	Մանկական պացիենտների համար առանձնացված ընդունարան/ զննման սենյակ	Ոչ	Ոչ	Այո	Այո
7.	Եմերջենսի բաժանմունք	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
8.	Հերթապահություն՝ հիվանդանոցի հերթապահ բժշկի կողմից, մանկաբույժը տնային կանչով	Այո	Ոչ	Ոչ	Ոչ
9.	Մանկաբուժական հերթապահություն, վիրաբույժը՝ տնային կանչով	Ոչ	Այո	Ոչ	Ոչ
10.	Շուրջօրյա մանկաբուժական,մանկական վիրաբուժական և մանկական ռեանիմատոլոգիական հերթապահություն	Ոչ	Ոչ	Այո	Այո
11.	Շուրջօրյա մանկաբուժական, մանկական վիրաբուժական, ռեանիմատոլոգիական և/կամ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո

	այլ մանկական մասնագետների հերթապահություններ՝ ըստ պրոֆիլի				
12.	Արտահիվանդանոցային մասնագիտացված և նեղ մասնագիտացված խորհրդատվական ծառայություններ	Ոչ	Ոչ	Մասնագիտացված և նեղ մասնագիտացված՝ առնվազն 8 մասնագետ	Մասնատիգացված և նեղ մասնագիտացված՝ առնվազն 12 մասնագետ
13.	Մանկական ինֆեկցիոն մահճակալներ ընդհանուր ինֆեկցիոն բաժանմունքի կազմում կամմանկական ինֆեկցիոնբաժանմուք, բացառությամբ քաղաքային բնակավայրերի, որտեղ առկա է ինֆեկցիոն հիվանդանոց	Այո	Այո	Ոչ	Ոչ
14.	Ընդունարանին հարակից առանձնացված մուտքով մեկուսարան (բոքս) կամ բոքսային բաժանմունք	Ոչ	Ոչ	Այո	Այո
Կադրային ռեսուրսներ					
15.	Մանկաբույժ	Այո	Այո	Այո	Այո

16.	Մանկական վիրաբույժ	Ոչ	Այո	Այո	Այո
17.	Մանկաբուժական նեղ մասնագետներ և վիրաբույժներ տարբեր պրոֆիլների	Ոչ	Ոչ	Այո, առնվազն 8	Այո, առնվազն 12
18.	Հարբժշկական մասնագետներ (հոգեբան, թերապիստ, սոցիալական աշխատող, լոգոպեդ և այլն)	Ոչ	Ոչ	Այո , առնվազն 2 մասնագետ	Այո, առնվազն 2 մասնագետ
Լաբորատոր ախտորոշիչ հետազոտություններ					
19.	Կլինիկական ընդհանուր հետազոտությունների իրականացման սեփական կարողություն	Այո	Այո	Այո	Այո
20.	Բիոքիմիական ընդհանուր հետազոտություններ իրականացման սեփական կարողություն	Այո	Այո	Այո	Այո
21.	Իմունաբանական հետազոտության իրականացման կարողություն, ներառյալ պայմանագրային հիմունքով	Ոչ	Ոչ	Այո	Այո
22.	Սերոլոգիական հետազոտությունների իրականացման կարողություն, ներառյալ պայմանագրային հիմունքով	Ոչ	Ոչ	Այո	Այո

23.	Մանրէաբանականհետազոտություններ իրականացման սեփական կարողություն	Ոչ	Այո	Այո	Այո
24.	Շուրջօրյա (7/24 աշխատանքային ռեժիմով) լաբորատոր (կլինիկական, կենսաքիմիական) հետազոտությունների իրականացում	Ոչ	Ոչ	Այո	Այո
25.	Շուրջօրյա (7/24 աշխատանքային ռեժիմով) լաբորատոր (կլինիկական, կենսաքիմիական) և գործիքային հետազոտությունների ապահովում (սոնոգրաֆիա, ռենտգեն, համակարգչային շերտագրում, այլ)	Ոչ	Ոչ	Ոչ	Այո, (առնվազն 2 գործիքային հետազոտություն)
26.	Նեղ մասնագիտական լաբորատոր հետազոտություններ (դեղորայքի, վիտամինների, տարրերի խտության որոշում, հազվադեպ այլ թեստեր և այլն), ներառյալ պայմանագրային հիմունքով	Ոչ	Ոչ	Ոչ	Այո, առնվազն 2
27.	Ռենտգեն ընդհանուր հետազոտություններ	Այո	Այո	Այո	Այո
28.	Ռենտգեն և համակարգչային շերտագրման մասնագիտացված հետազոտություններ	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
29.	Ուլտրաձայնային հետազոտություններ	Այո	Այո	Այո	Այո

30.	Սրտի, թոքերի ՈՒՁՀ	Ոչ	Ոչ	Այո	Այո
31.	Մանկական էնդոսկոպիկ ծառայություններ	Ոչ	Ոչ	Այո	Այո
32.	Նեղ մասնագիտական մանկական հետազոտություններ՝ ԷԷԳ և վիդեո- ԷԷԳ, շնչառական թեստեր, ալերգաբանական թեստեր, քրտինքի տեստ, համակարգչային սպիրոմետրիա, ուռոֆլումետրիա, ֆիբրոսկոպիա,նեյրոսոնոգրաֆիա և այլ)	Ոչ	Ոչ	Ոչ	Այո Առնվազն 2 հետազոտություն
33.	Մասնագիտացված սարքավորումներ (նեղ մասնագիտացված միջամտությունների, վիրահատություններ ժամանակ կիրառվող) · Բրոնխոսկոպ · Գաստրոսկոպ · Կոլոնոսկոպ · Ցիստոսկոպ · Ուրեթրոսկոպ · Լապարոսկոպ · Էնդոսկոպ Էլեկտրոէնցեֆալոգրաֆ	Ոչ	Ոչ	Այո Առնվազն 1	Այո Առնվազն 3

Բուժում/Միջամտություն

34.	Թթվածնի սատուրացիայի մշտադիտարկում	Այո	● Այո	Այո	Այո
35.	ներերակային միջամտությունների իրականացում	Այո	Այո	Այո	Այո
36.	Ջրաաղային բալանսի կառավարում	Ոչ	Ոչ	Այո	Այո
37.	Միզապարկի կատետերիզացիա	Ոչ	Այո	Այո	Այո
38.	Լյումբար պունկցիա	Ոչ	Ոչ	Այո	Այո
39.	Պարզ էնտերալ կերակրում նազոգաստրալ կատետերի միջոցով	Ոչ	Այո	Այո	Այո
40.	Ցածր հոսքային թթվածնաթերապիա	Այո	Այո	Այո	Այո
41.	Բարձր հոսքային թթվածնաթերապիա	Ոչ	Ոչ	Այո	Այո
42.	Արյան փոխներարկում	Այո՝ կյանքին սպառնացող դեպքերում	Այո	Այո	Այո
43.	Պերիֆերիկ անոթի պունկցիայի միջոցով կենտրոնական անոթների կատետերիզացիա	Ոչ	Ոչ	Ոչ	Այո

Այլ ենթակառուցվածքներ					
44.	Մանկական ախտաբանական ծառայություն	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
45.	Արտագնա անհետաձգելի ծառայություն (սանավիացիա)	Ոչ	Ոչ	Ոչ	Այո
46.	Մանկական և ծնողական հոգեբանական ծառայություն	Ոչ	Ոչ	Այո	Այո
47.	Մանկական վերականգնողական ծառայություն	Ոչ	Ոչ	Այո	Այո